եւ ի կէտ ընթացից երթեւեկութեան ճանապարհին դե-
րեզմանաստանի՝ ընդ նոր իմն չքնաղ գուժի գոչէին
ծերպք վիմաց ընդ նոյնս համակ ձայնակցութեամբ
յօրինեալ, եւ այր յերկուց կողմանց հնչմունք ար-
ձակէին արտաքս թա՛մ բա՛մ գո՛մ փո՛մ ըստ երգոց
նաժշտացն երգակցելով ի դրուատ մեծութեան Ալեք-
սանդրի։

Այս ինձ անվավեր սփոփանք եւ ընթերցողացդ
մտաց իմն է աշխատանք, ընդունայն ջանուտութիւնք
եւ զուր վաստակք։ Զի նեռ բարկութեան Ամենակա-
լին հարաւ յիս եւ ո՞վ ոք իցէ որ կարիցէ հանել զայն
յինէն։ Սուսերն սրեալ խաղաց ի վերայ իմ եւ ո՞վ էր
կարող հանդարտիլ նմա եւ հանդարտեցուցանել։ Զեռն
Ամենազօրին մխեցաւ յիս եւ ո՞վ է ընդդէմ կալ ժու-
ժել։ Ողբասցէ զիս Անաթոթացին մարգարէ, որպէս
երբեմն զՍեղեկիա իւրովքն եւ նորին ժողովրդօք՝
զածեալսն ի սով, ի գերութիւն եւ ի սուր։ Ըստ որում
միտք իմ ցնդեալ ցնորին աղճատեալ ի շաղփաղբա-
նութիւնս արժանի ձերում մեծութեանց՝ ոչ յօրինե-
լով զշար գանկատի խոցոտեալ սրտի։ Ո՞յք լիցին ինձ
ընկեր. ո՞վ ոք իցեն ծնօղք իմս օրինակի, թէպէտ որ
զոմանս ի վերոյ յիշեցի։ Բերէ՞ք միթէ օրինակ ինձ
զծնօղս աղեգալար Պէյթլէհէմեան, որոց մանկունքն
քարշեալ յինքեանց ի ձեռս սուսերամերկ դահճացն
Էրոտէի՝ իբրեւ զծաղիկ նռնենեաց դիւթաւալ արիւ-
նաներկ յերկրի ճապաղեալ. որք զքաղցրութիւն եւ
ոչ զդառնութիւն նոցա էին տեսեալ. Բ՝ յորոց բա-
զումքն զպահակսն ունէին ի տան եւ յայդիս եւ յան-
դաստանս. Գ՝ յորոց բազումքն ծնան միսիթարու-
թեամբ. ես փայտ գօսացեալ եւ զնմանն չունիմ եւ
ոչ այլ ոք։ Տա՞յք միթէ ինձ օրինակ զՏիրածինն եր-
ջանկուհի զողբ կսկծագին, որ ընդդէմ որդւոյն Յիսու-
սի ի խաչելութեան։ Վասն որոյ ասեմ երկու աւուրքք